

<p><b>Համարը</b> թիվ 1  <b>Տիպը</b> Պաշտոնական  պարզաբանում  <b>Սկզբնաղբյուրը</b> ՀՀԳՏ 2014.04.01/8(487)  <b>Ընդունող մարմինը</b> Հեռուստատեսության և  ռադիոյի ազգային  հանձնաժողով  <b>Ստորագրող մարմինը</b> Հեռուստատեսության և  ռադիոյի ազգային  հանձնաժողովի նախագահ</p>	<p><b>Տեսակը</b> Մայր  <b>Կարգավիճակը</b> Գործում է  <b>Ընդունման վայրը</b> Երևան  <b>Ընդունման ամսաթիվը</b> 20.03.2014  <b>Ստորագրման ամսաթիվը</b> 20.03.2014  <b>Վավերացման ամսաթիվը</b>  <b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b></p>
<p><b>Վավերացնող մարմինը</b>  <b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 20.03.2014</p>	

**⊕ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ  
«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 7-  
ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

20 մարտի 2014 թ. թիվ 1  
ք. Երևան

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ  
ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 7-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ հեռուստառադիոհեռարձակում՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածում հաղորդագծով (ներառյալ՝ կաբելային (մալուխային) կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյունները հասանելի լինեն հասարակությանը:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոհեռարձակումի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա: Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնում են Հանրային հեռուստառադիոընկերությունը և միջպետական պայմանագրի հիման վրա հեռարձակողները:

Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ հեռուստառադիոհեռարձակման լիցենզիա՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս իրականացնելու հեռուստառադիոհեռարձակումի հեռարձակում (վերահեռարձակում):

Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ հեռուստառադիոընկերություն (հեռուստաընկերություն և (կամ) ռադիոընկերություն)՝ իրավաբանական անձ, որը հեռարձակում կամ վերահեռարձակում է հեռուստառադիոհեռարձակումներ և պատասխանատվություն է կրում սույն օրենքի և իրավական այլ ակտերի կատարման համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ լիցենզավորված անձ՝ սույն օրենքի համաձայն՝ հեռուստառադիոհեռարձակման (վերահեռարձակման) լիցենզիա ստացած անձ:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստառադիոհեռարձակում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման համար լիցենզիա չի պահանջվում, եթե սփռման և սպասարկման տարածքը սահմանափակվում է իրավաբանական անձին պատկանող շենքերով ու տարածքներով, բացառությամբ հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) պաշտոնապես պարզաբանում է.

Օրենքը չի արգելում հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում հեռուստառադիոհեռարձակումների կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած հեռուստառադիոընկերության կողմից պայմանագրային հիմունքներով հեռուստառադիոհեռարձակումը (վերահեռարձակումը) կաբելային (մալուխային) ցանցի միջոցով:

**Հեռուստատեսության և ռադիոյի  
ազգային հանձնաժողովի նախագահ**

**Գ. Բունիայան**